ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

_____N _____
Ձեր N _____

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի պարոն նախարար

Հիմք ընդունելով Ձեր 2019թ. հուլիս 16-ի «Տուբերկուլոզային բժշկական օգնություն եվ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում ուսումնասիրության նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ 1956 – Ա հրամանով հաստատված աշխատանքային խմբի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում աշխատանքային խմբի ղեկավար, ԲՕՔ վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Քոչարյանի և թիվ 02.3/[455920]-19 հանձնարարականի համաձայն «Քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսերի» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսարդյունավետության վերլուծության վերաբերյալ ՊԱԳ պետ Ծաղիկ Վարդանյանի զեկուցագրերը՝ հայտնում եմ, որ

Քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսերի ստացիոնար բաժանմունքը գործում է խիստ թերբեռնված, հիմնականում քսուք բացասական ՏԲ դեպքերի հոսպիտալացումով, որոնք ենթական չեն հոսպիտալացման, իսկ դեղակայուն դեպքերը, համապատասխան օդափոխության համակարգի և դեղակայուն բաժանմունքի բացակայության պատճառով, հոսպիտալացվում են Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն: «Քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսերի» ՓԲԸ-ի հիվանդանոցային ծառայությունը

ֆինանսավորվում է՝ «Այլ ծախսեր»-ի մասով՝ պահպանման համար նախատեսված նորմատիվներով հաշվարկված գումար՝ տարեկան պայմանագրային գումարը՝ 87,428.6 հազար ՀՀ դրամ է (48 մահճակալ) և «Դեղերի և բժշկական նշանակության առարկաների և սննդի ծախսեր» մեկ հիվանդ/օրվա համար հաստատված արժեքով, որի համար պայմանագրով տարեկան նախատեսված է 9,393.2 հազար ՀՀ դրամ՝ 4817 մահճակալ-օրերի համար:

«Քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսերի» ՓԲԸ-ի կողմից իրականացվող դիսպանսեր բուժօգնության առումով առկա է ինչպես գործառույթների, այնպես էլ ծախսերի կրկնություն: Հակատուբերկուլոզային դիսպանսերը իրականացնում է դիսպանսեր բուժօգնություն Երևան քաղաքի ամբողջ բնակչության համար, ներառյալ լաբորատոր-գործիքային հետազոտությունները (մեկ անձին՝ 45 ՀՀ դրամ), միևնույն ժամանակ առողջության առաջնային պահպանման բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող թվով 9 բժշկական կազմակերպություններում՝ տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների կողմից ներառյալ լաբորատոր-գործիքային հետազոտությունները (մեկ անձին՝ 178 ՀՀ դրամ): Մարզերում այս գործառույթը իրականացվում է բացառապես պոլիկլինիկական օղակի միջոցով և նմանատիպ կրկնություն առկա չէ, բացի այդ իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հիվանդանոցային օղակում դիսպանսերային բուժօգնության տրամադրումն անարդյունավետ է:

Ելնելով վերը նշվածից՝ առաջարկում եմ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրում կատարել համապատասխան փոփոխություն «Քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսերի» ՓԲԸ-ի դերի հստակեցմամբ և պետական պատվերի պայմանագրի վերանայմամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

26.08.2019

X

VERIFIED OCSP 26.08.2019 10:53:39 GMT+4

Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416